ԾԱՆՈԹԱՑԻ՛Ր ՅՈԹ ԿԱՂՆԻԻ

Գուբ Արջ

Սա Գուբ Արջն է: Նա Յոթ Կաղնի գյուղի ամենամեծ երեխան է, բայց նաև շատ ընկերասեր է: Միրում է դուրսը և ամեն տեսակի միջատների: Իր ամենասիրած միջատները մրջյուններն են:

Ջամփեր (ցատկորդ) Ճագար

Ծանոթացի՛ր Ջամփեր Ճագարի հետ: Ջամփերը սիրում է սպորտով զբաղվել: Նա սիրում է ֆուտբոլ, թենիս, բեյսբոլ, բասկետբոլ, հեծանիվ վարել, լողալ, ցատկել և այլն: Նաև սիրում է սպորտային կոշիկներ, որոնցից տարբեր տեսակներ ունի:

Ժանտաքիս Լիլի

Լիլին՝ որպես ժանտաքիս, շատ ճարտար է: Նա սիրում է արվեստը: Ժամանակի մեծ մասն անցկացնում է նկարելով, գունազարդելով և տարբեր իրեր պատրաստելով: Նաև սիրում է իր փոքր եղբորը՝ Ստինքին (Գարշահոտիկին):

Սկյուռ Սեմի

Ծնված օրվանից Սեմին սիրում է խաղալ գաջեթներով և նորոգել փչացած իրերը: Նրան երբևէ չեք տեսնի առանց գործիքի: Սեմին ու իր երկվորյակ քույրը՝ Սոֆին, ապրում են ծառի տնակում, ինչպես և բոլոր սկյուռները:

ԵՐԵԽԱՆԵՐԻ ՀԵՏ

Սկյուռ Սոֆի

Սոֆին Սեմիի երկվորյակ քույրն է: Աշխարհում ամենից շատ նա սիրում է կարդալ: Նաև մաթեմատիկա է սիրում: Երբեմն շատ ճոռում բառեր է գործածում և հետո ստիպված է լինում բացատրել դրանք իր ընկերներին:

Մացառախոզ Փոքի

Փոքին շատ սրածայր փշեր ունի, որոնք ցույց են տալիս, թե ինչ տրամադրություն ունի: Երբ Փոքին տխուր է լինում, փշերը կախ են: Երբ հուզված է լինում, դրանք ցցվում են: Փոքին հանգիստ բնավորություն ունի: Նա սիրում է ամբողջ օրը պառկել ճոճքի մեջ և նվագել իր շրթհարմոնը:

Մկնիկ Ալլի

Եվ չմոռանաս Մկնիկ Ալլիին: Նա սիրում է խմբի բոլոր անդամների «պոչից բռնած ման գալ», հատկապես իր լավագույն ընկերոջ՝ Ժանտաքիս Լիլիի: Ալլին ապրում է տատիկի հետ, սիրում է հագնել տատիկի կոշիկներն ու կրել նրա զարդերը:

Սա **Որդ Էռնին** է: Նա շատ ամաչկոտ է, այնպես որ ստիպված կլինես փնտրել նրան...



Մեծ Ջիլ Գորշուկները

ը բացվելուն պես՝ շաբաթ օրերին, ընկերները սիրում էին հավաքվել ֆուտբոլ խաղալու Քեռի Բադի պուրակում: Երբեմն նրանք ինքնաբուխ խաղի մեջ էին մտնում անցնող-դարձողների հետ:

Մի օր պուրակ եկան Մեծ Ջիլ Գորշուկները:

– Ուզո՞ւմ եք ֆուտբոլ խաղանք,– հարցրեց ամենամեծ Գորշուկը:– Մենք ձեզ կջախջախենք, բայց քանի որ մոտակայքում ուրիշ ոչ ոք չկա, ձեզ հետ կխաղանք:

Ընկերներն իրար գլխի հավաքվեցին:

– Նրանք կտրորեն մեզ՝ ինչպես միջատների,– ասաց Գուբը:

- Մենք հաղթեցինք,- գոչեց թիմը:- Կեցցե՛ Ալլին:

Գուբը Ալլիին բարձրացրեց իր ուսերին:

- Լավ խաղ էր,- ասաց Գորշուկների ավագը,- ավելի լավ խաղացիք, քան ես սպասում էի:

- Շնորհակալ՝ եմ,- ասաց Ջամփերը,- եկեք մի օր կրկին խաղանք:

- Իհա՛րկե,- ասաց ավագը,- եթե Ալլին մեր թիմից խաղա:

ԾՆՈՂԻ ԱՆԿՅՈՒՆ

Սովորություն 6 – Ստեղծի՛ր սիներգիա* • Համատեղե՛ք ուժերը

Հաճախ իմ տանը ընտանեկան ճաշից հետո ունենում ենք, ինչպես մենք ենք այն անվանում, «տասնհինգրոպեանոց ծրագիր»: Յուրաքանչյուրը տասնհինգ րոպեով թողնում է իր անելիքը, և միասին ափսեներն ենք լվանում: Միշտ զարմանում եմ, թե ինչ արագությամբ ենք կարողանում դրանք լվանալ և տեղավորել, երբ աշխատում ենք թիմով: Ահա թե ինչ է սիներգիան՝ գնահատել միմյանց տարբերությունները և աշխատել միասին՝ ստանալու ավելի լավ լուծում, քան միայնակ անելու դեպքում: Երբ 1+1=3-ի կամ ավելի:

Երբ կարդաք այս պատմությունը ձեր երեխաների հետ, անպայման ընդգծեք, թե ինչպես Յոթ Կաղնիի ընկերները օգտագործեցին սիներգիան խաղում հաղթելու համար: Միայնակ գործելով՝ նրանք անգամ մեկ միավոր չէին վաստակի իրենց օգտին: Բայց երբ նրանք սկսեցին կենտրոնանալ յուրաքանչյուրի յուրահատուկ ուժեղ կողմի վրա և սկսեցին թիմով խաղալ, նրանց հնարավոր չէր կանգնեցնել: Ինչպես Հելեն Քելերն է մի անգամ ասել՝ «Այնքա՛ն քիչ բան կարող ենք անել միայնակ, այնքա՛ն շատ բան կարող ենք անել միասին»:

---

* Սիներգիա – տարբեր մասնիկների (մարդկանց, խմբերի) համատեղ գործունեություն, որի արդյունքն ավելի զորեղ է, քան յուրաքանչյուր մասնիկինը՝ առանձին վերցրած:

Քննարկում

1. Ինչու՞ Ցոթ Կաղնիի ընկերները սկզբում չէին ցանկանում ֆուտբոլ խաղալ Գորշուկների հետ:
2. Ինչու՞ Ցոթ Կաղնիի ընկերներն այդքան հետ ընկան առաջին խաղակեսում: Եվ ինչու՞ էին նրանք ուզում դադարեցնել խաղը:
3. Ըստ Սոֆիի՝ ինչ ուժեղ կողմեր ունեին Ալլին, Գուբը, Ջամփերը, Սեմին, Լիլին և Փոքին: Դու՞ ինչ ես կարողանում լավ անել:
4. Ինչպե՞ս Ցոթ Կաղնիի թիմը հաղթեց խաղում: Ինչը փոփոխություն մտցրեց: Ո՞վ խփեց հաղթական գոլը:
5. Ինչ ես զգում, երբ թիմային հաղթանակ եք տանում:

Փոքր քայլեր

1. Գրիր երեք բան, որ դու իսկապես լավ ես կարողանում անել: Այնուհետև գրիր երեք բան, որ քո մտերիմներից որևէ մեկն է կարողանում լավ անել, օրինակ՝ եղբայրը, քույրը կամ ընկերը:
2. Դիտիր քո սիրած սպորտային թիմի խաղը: Հատուկ ուշադրություն դարձրու, թե ինչպես են բոլոր խաղացողները միասին գործում որպես թիմ:
3. Խոսիր այն մասին, թե ինչն է թիմի անդամին լավը կամ վատը դարձնում:
4. Այս ամառ կանչիր երկու ընկերոջ և նրանց հետ միասին լիմոնադի վաճառասեղան դիր, ինչպես Գուբն ու Ջամփերն արեցին «Գուբը և միջատորսիչ պարագաները» պատմության մեջ: Ձեզնից մեկը կարող է պատրաստել պաստառը, մյուսը՝ լիմոնադը, իսկ երրորդը՝ տեղադրել սեղանը և բերել բաժակներն ու սառույցը: Ձեզ ուրախ ժամանց:



Ջամփերը և կորած թիթեռացանցը

Օրերից մի օր, Գուբի տան մոտով անցնելիս, Ջամփերը այցելեց նրան:

– Կուզես ֆրիսբի* խաղալ,– հարցրեց նա:

– Ոչ, շնորհակալություն,– ասաց Գուբը:– Ես ահավոր տխուր եմ, քանի որ կորցրել եմ իմ թիթեռացանցը:

– Բայց արևոտ օր է,– ասաց Ջամփերը:– Մենք կարող էինք գնալ Ձկան Աչք լիճ՝ խաղալու:

– Տրամադրություն չունեմ,– ասաց Գուբը:

– Դե՛,– ասաց Ջամփերը,– այնքան զվարճալի կլինի: Արի՛ գնանք:

Նա սկսեց շրջանաձև ցատկոտել Գուբի չորս կողմը:

– Ո՛չ,– ասաց Գուբը,– դու չափազանց շատ ես

* Ֆրիսբի – թռչող ափսե:

խոսում և չափազանց շատ ես շարժվում ու երբեք չես լսում դիմացինին: Դու գնա ու առանց ինձ լավ ժամանակ անցկացրու:

- Լավ,- ասաց Ջամփերը,- ավելի ուշ կտեսնվենք:

Ջամփերը վազելով հեռացավ: Նա թեթև վազքով անցնում էր Մկնիկ Ալլիի տան մոտով:

Ալլին նստած էր իր ավազատուփի մեջ:

- Վայ, վայ,- բացականչեց Ալլին:

- Ինչ է պատահել,- գոչեց Ջամփերը:

- Ցապիկիս թայց եմ հաքեյ:

- Հը՛,- ասաց Ջամփերը,- հաքեյ, հոկեյ, ուզում ես գնանք հոկեյ խաղանք:



Ալլին տարուբերեց գլուխը.

- Վայ, վայ,- բղավեց նա,- ՑԱՊԻԿԻՍ ԹԱՑՑ ԵՄ ՀԱՔԵՑ:

- Օ՛, հասկացա, թաց ես,- ասաց Ջամփերը,- գնամ տատիկիդ կանչեմ:

Ալլին ոտքերը դոփեց ավազին.

- ՎԱ՛Ց, ՎԱ՛Ց, ՑԱՊԻԿԻՍ ԹԱՑՑ ԵՄ ՀԱՔԵԵԵԵԵՑ:

- Ես հանձնվում եմ,- ասաց Ջամփերը,- գնանք տեսնենք՝ արդյոք ժանտաքիս Լիլին կհասկանամ, թե ինչ է պատահել:

Ջամփերը Ալլիին մեջքին դրեց և տարավ Լիլիի տուն:

ամբողջական գիրքն այստեղ է՝

Bookmark